

**ԽՈՍՔԻՄԱՍՍՅԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆԵՐԸ Վ. ՊԻԿՈՒԼԻ «ՖԱՎՈՐԻՏ»
ՎԵՊԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

ԼԻԼԻԹ ԾՍՏՈՒՐՅԱՆ

Ցանկացած թարգմանության մեջ անխուսափելի են զանազան փոխակերպումները: Դրանք կարող են պայմանավորված լինել լեզվական և արտալեզվական գործոններով: Այդ փոխակերպումները լեզվաբանները պայմանականորեն բաժանում են խմբերի՝ հաշվի առնելով դասակարգման տարբեր սկզբունքներ: Լայն առումով դրանք ներկայացվում են բառային և քերականական մակարդակներում: Քերականական փոխակերպումների մեջ մեծ տեղ են զբաղեցնում խոսքիմասային փոխարինումները: Թարգմանության գործընթացում բնագրի լեզվի որևէ խոսքի մասի փոխարինումը այլ խոսքի մասով հիմնականում պայմանավորված է թարգմանության լեզվի օրինաչափություններով, քերականական, նաև ոճական առանձնահատկություններով:

Բանալի բառեր - խոսքի մաս, փոխակերպում, համարժեքություն, բառային հավելումներ, բացթողում, ձևաբանություն, թարգմանության լեզու, ոճական առանձնահատկություն, քերականական փոխակերպում, նախադասության անդամ

Բառային և քերականական փոխակերպումները հիմնականում փոխկապակցված են, քանի որ թարգմանիչը քերականական փոխակերպումներին մեծ մասամբ դիմում է գրական երկի իմաստային և ոճական առանձնահատկությունները համարժեքորեն և ամբողջական վերաարտահայտելու համար: Տեսական գրականության մեջ քերականական փոխակերպումները ավանդաբար ներկայացվում են ձևաբանական և շարահյուսական տեսակներով: Սակայն հասկանալի է, որ գործնականում դրանք նույնպես սերտորեն փոխկապակցված են: Նախադասության կառուցվածքային փոփոխությունները, օրինակ, կարող են առաջ բերել նաև ձևաբանական փոփոխություններ, և հակառակը: Յա. Ռեցկերը, անդրադառնալով քերականական փոխակերպումներին, նշում է, որ փոխարինվում են նախադասության ինչպես գլխավոր (ամբողջական փոխակերպում), այնպես էլ երկրորդական (մասնակի փոխակերպում) անդամները: Փոխարինվում են նաև խոսքի մասերը: Եվ սովորաբար այս փոխարինումները տեղի են ունենում միաժամանակ¹:

Խոսքիմասային փոխարինումը բնագրի լեզվի տվյալ խոսքի մասի՝ թարգմանության լեզվում մեկ այլ խոսքի մասով փոխարինվելն է: Այդպիսի փոխարինումները ռուսերենից հայերեն թարգմանություններում

¹ Տե՛ս Քեցկեր Я. И. Теория перевода и переводческая практика. М., 1974, էջ 80:

որպես կանոն կատարվում են հետևյալ խոսքի մասերի միջև. գոյականաձևական, գոյականաբայ/դերբայ, մակբայաձևական, մակբայադերանուն, ածականադերանուն և այլն:

Փոխարինումների նպատակը և պատճառները կարող են տարբեր լինել: Փոխարինումներ կարող են կատարվել, օրինակ, բնագրի և թարգմանության լեզվի քերականական տարբերությունների, գեղարվեստական գրականության ժանրային և բովանդակային առանձնահատկությունների պատճառով: Կարևոր նշանակություն ունի նաև թարգմանչի անհատականությունը: Նշված իրողությունները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի թարգմանության մեջ ունեն շատ հետաքրքիր և բազմազան դրսևորումներ:

Նախ ածականաբայական փոխարինումների մասին: Առավել հաճախ փոխարինվում են հարաբերական ածականները: Հարաբերական ածականի փոխարինումը գոյականով հաճախ է հանդիպում տեղանունների թարգմանության մեջ: Այս մասին Բարխուդարովը գրում է. «Բավական տարածված է ածականի (ամենից հաճախ աշխարհագրական անուններից կազմվածները) փոխարինումը գոյականով»²: Թեև Բարխուդարովը բերում է անգլերենի և ռուսերենի օրինակը, այնուամենայնիվ նույն երևույթը առկա է նաև ռուսերենից հայերեն թարգմանություններում: Եթե ռուսերենում հատուկ անուններից կազմված ածականները առավել տարածված են, ապա հայերենում ռուսերենի այս կարգի հարաբերական ածականներին համարժեք են լինում սեռական հոլովով գոյականները.

*Однажды начались сборы в **ГОЛШТИНСКИЙ** Эйтин³. – Մի օր սկսեցին պատրաստվել **Հոլշտայնի** էյտին մեկնելու⁴:*

*Громадный **МИТАВСКИЙ** замок (дивное создание Растрелли) был еще в строительных лесах. (h. 1, էջ 41) – Միտավայի վիթխարի դղյակը (Ռաստրելլիի զարմանահրաշ կերտվածքը) դեռևս շինարարական փայտամածների մեջ էր: (h. 1, էջ 42) (Բոլոր օրինակներում պահպանված են թարգմանության կետադրությունը և ուղղագրությունը):*

*Едва кони скатили карету на **ДВИНСКИЙ** лед, сразу же салютовали крепостные пушки. (h. 1, էջ 42) – Նոր էին ձիերը կտրքը դուրս բերել **Դվինայի** ասրույցի վրա, երբ անմիջապես որոտացին բերդի թնդանոթները: (h. 1, էջ 43)*

*Ей понадобилась справка о доходах с **РИЖСКОЙ** таможни⁵. – Կայսրուհուն հարկավոր էր տեղեկանք **Ռիգայի** մարաշտան մասին⁶:*

² Бархударов Л. С. Язык и перевод: Вопросы общей и частной теории перевода. М., 1975, с. 197.

³ Пиккуль В. С. Фаворит. Ленинград, т. 1, 1984, с. 30 (այսուհետ բնագրի էջերը կնշվեն օրինակների կողքին՝ փակագծերում՝ հատորից հետո):

⁴ Վ. Պիկուլ, Ֆավորիտ. թարգմանիչ՝ Վ. Վարդանյան, հ. 1, Եր., 1990, էջ 27:

⁵ Пиккуль В. С. Фаворит. Ленинград, т. 2, 1984, с. 12.

⁶ Վ. Պիկուլ, Ֆավորիտ. հ. 2, Եր., 1990, էջ 15:

*Было 8 часов вечера 9 февраля, когда возок с невестою нырнул под кремлевские ворота. (h. 1, էջ 45) – Փետրվարի 9-ի երեկոյան ժամը 8-ն էր, երբ հարսնացուին տանող սահնակը հասավ **Կրեմլի** դարպասներին: (h. 1, էջ 47)*

Այսպիսի օրինակները բազմաթիվ են, և դրանց մեծ մասը (*митавский-Միտավայի, двинский-Դվինայի, крепостной-բերդի, рижский-Ռիզայի, кремлевский-Կրեմլի*) հայերեն թարգմանվել է գոյականով: Պատճառը երկու լեզուների քերականական առանձնահատկություններն են: Ռուսերենում որոշի և որոշյալի քերականական կապի տեսանկյունից տարբերում են համաձայնեցվող և չհամաձայնեցվող (*согласованные и несогласованные*) որոշիչներ: Ընդ որում, համաձայնեցվող որոշիչը արտահայտվում է այն խոսքի մասերով, որոնք կարող են որոշյալին համաձայնել թվով, հոլովով, իսկ եզակի թվում՝ նաև սեռով⁷: Սա նշանակում է, որ որոշիչը գոյականով արտահայտվում է, եթե չի համաձայնում որոշյալին: Իսկ եթե չհամաձայնեցվող որոշիչը դրվում է գոյականի սեռական հոլովով, ունենում է նույն նշանակությունը, ինչ հայերենում՝ հատկացուցիչը. ցույց է տալիս պատկանելություն: Այդ իսկ պատճառով ռուսերենում ածականով արտահայտված որոշիչը հայերենում կարող է թարգմանվել գոյականի սեռական հոլովով և ցույց տալ ոչ միայն պատկանելություն, այլ նաև հատկանիշ: Սեռական հոլովով արտահայտված որոշիչի մասին Մ. Ասատրյանը նշում է. «Սեռական-տրական (բուն սեռական) հոլովը հաճախ արտահայտելով հատկության նշանակություն և այդ իմաստով մոտենալով հարաբերական ածականներին՝ հանդես է գալիս որոշիչ պաշտոնով՝ պատասխանելով ինչպիսի՝ հարցին, օրինակ՝ փայտի աշտարակ, երկաթի սանդուղք, ցորենի այլուր, գարու հաց, երեխայի խելք, որսի շուն, գործի մարդ, կովի մարդ, գինու բաժակ, ձեռքի աշխատանք, քամու ջրադաց, ձիու ճանապարհ, կառքի ճանապարհ և այլն»⁸:

Իհարկե, ածական-գոյական փոխարինումը բնորոշ է ոչ միայն հատուկ անուններին, այլ նաև հասարակ գոյականներից կամ այլ խոսքի մասերից կազմված հարաբերական ածականներին: Առհասարակ այս փոխարինումը խոսքիմասային փոխարինումների մեջ տարածվածներից է, և վեպում օրինակները նույնպես բազմաթիվ են: Բերենք ևս մի քանի օրինակ.

*Первое, что она увидела при лунном свете, это длинный палаш драгунского офицера. (h. 1, էջ 33) – Առաջին բանը, որ նա տեսավ **լուսնի** լույսի տակ, դրազուկայն սպայի երկար թրադաշունն էր: (h. 1, էջ 30)*

Мы спали в свинятнике; вся семья, дворовая собака, петух, дети в колыбелях. (h. 1, էջ 41) – Քնեցինք խոզանոցում՝ ամբողջ ընտանիքը,

⁷ Տե՛ս **Валгина Н. С.** Современный русский язык: Синтаксис. 4-е изд., М., 2003, էջ 114-115:

⁸ **Մ. Ասատրյան**, Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն. Եր., 1987, էջ 199:

բակի շունը, արաղաղը, երեխաները՝ օրորոցներում: (հ. 1, էջ 41)

Избегайте расточительной игры в карты, деньги карманные держите в кошельке. (հ. 1, էջ 40) – *Խոռափեք վանողական թղթախաղերից, գրպանի փողերը պահեք դրամապանակում:* (հ. 1, էջ 41)

Дворовая собака - бакли շուն, карманные деньги - գրպանի փողեր օրինակներում գոյականով փոխարինումը չի առաջացրել շարահյուսական պաշտոնի փոփոխություն (ընդգծված բառերը գոյականի սեռական հոլովով արտահայտված որոշիչներ են), քանի որ, ինչպես վերը նշեցինք, ռուսերենում ածականով արտահայտված որոշիչը հայերենում կարող է թարգմանվել գոյականի սեռական հոլովով և ցույց տալ ոչ միայն պատկանելություն, այլ նաև հատկանիշ:

Որոշ դեպքերում ածականը ածականով թարգմանել հնարավոր չէ, քանի որ հայերենում չկա խոսքիմասային համարժեքը: Այսպես՝ *За Мемелем почтовый тракт кончился, до Либавы катили на обывательских санях.* (հ. 1, էջ 41) – *Մեմելից այն կողմ փոստուղին վերջացավ, մինչև Լիբավա գնացին տեղաբնակների սահնակները:* (հ. 1, էջ 42) կամ՝ *С треском разгорелись смоляные факелы, громко стучали двери – каретные и дворцовые.* (հ. 1, էջ 45) – *Ճարճատյունով վառվեցին ձյուրթի ջահերը, բարձրաձայն բացվում-փակվում էին դռները կառքերի ու պալատի:* (հ. 1, էջ 47) նախադասություններում բնագրի ընդգծված բառերը հայերենում ածականով չեն կարող փոխարինվել, քանի որ ածական համարժեք չկա (չունենք *տեղաբնակային, կառքային* ածականներ), և գոյականով փոխարինումը այլընտրանք չունի: Ռեցկերը, քննելով անզլերեն-ռուսերեն թարգմանության օրինակները, գոյականի, մակբայի փոխարինումների պատճառների վերաբերյալ նշում է, որ դրանք կարող են տարբեր լինել, օրինակ թարգմանության լեզվում համապատասխան գոյական, մակբայ կամ այլ խոսքի մաս չկա, փոխարինումն անհրաժեշտ է լեզվական նորմի տեսանկյունից, թարգմանության լեզվում գոյություն ունի տվյալ խոսքի մասով արտահայտված բառ, բայց այն համապատասխան չէ համատեքստին և այլն⁹: Այս դեպքում ևս կան օրինակներ, երբ ածականով փոխարինումը հնարավոր, բայց ոչ նախընտրելի տարբերակ է՝ պայմանավորված նախադասության իմաստային և ոճական առանձնահատկություններով: Բերենք այդպիսի մի քանի օրինակ.

Фике не раз просыпалась от неистовых женских визгов и раскатистого мужского хохота. (հ. 1, էջ 45) – *Ֆիկեն մի քանի անգամ արթնացավ կանանց ճչոցներից ու տղամարդկանց զրնգուն քրքիչներից:* (հ. 1, էջ 48)

Ворочаясь на сене, майор в ночной жути стал возиться с пистолетами. (հ. 1, էջ 79) – *Խոտի վրա շուռումուռ գալով՝ մայորը երկյուղալի գիշերվա մեջ սկսեց ատրճանակները տնտղել:* (հ. 1, էջ 92)

⁹ Տե՛ս Բецкер Я. И., նշվ. աշխ., էջ 82-85:

Առաջին օրինակում հայերեն *կանացի* և *տղամարդկային* ածականներով արտահայտված համարժեք ձևերը ոճական առումով համահունչ, իսկ իմաստային առումով համապատասխան չէին լինի: Երկրորդ օրինակում գոյականը փոխարինվել է ածականով, ածականը՝ գոյականով, ինչը իմաստային առումով ավելի համապատասխան է. *գիշերային երկյուղի մեջ* թարգմանելու դեպքում միտքը բոլորովին այլ կլիներ:

Ինչպես վերջին օրինակից երևում է, ոչ միայն ածականներն են փոխարինվում գոյականներով, այլ նաև գոյականները՝ ածականներով: Թեև պետք է նշել, որ գոյական-ածական փոխարինումը ավելի քիչ է հանդիպում, քան հակառակ երևույթը: Բացի այդ՝ ինչպես նախորդ օրինակներում, այստեղ նույնպես գոյականները փոխարինվում են հիմնականում հարաբերական ածականներով: Բերենք մի օրինակ, որում բնագրի գոյականը թարգմանվել է ածականով, սակայն վերջինս կիրառվել է գոյականաբար.

Сгодится и такая нашему дурачку! (հ. 1, էջ 35) – *Այդպիսին էլ ձեռք կտա մեր անխելքին:* (հ. 1, էջ 34)

Առավել հաճախ է հանդիպում, երբ գոյականը փոխարինվել է ածականով, որը պահպանել է իր խոսքիմասային իմաստը.

Царица украсила шею невестки ожерельем в 150 000 рублей. (հ. 1, էջ 50) – *Թագուհին հարսի վիզը զարդարեց 150000 ռուբլիանոց մանյակով:* (հ. 1, էջ 54)

Неужто и впрямь совсем без разума наш сыночек? (հ. 1, էջ 76) – *Մի՞ թե իսկապես բոլորովին անխելք է մեր զավակը:* (հ. 1, էջ 88)

Փոխարինման պատճառները պայմանավորված են երկու լեզուների քերականական առանձնահատկություններով (ռուսերենի նախդիրով և հոլովով կառույցը տվյալ դեպքում հայերեն նույն կերպ չէր կարող թարգմանվել՝ *в 150 000 рублей-150000 ռուբլիանոց*), ավելորդ բառերից խուսափելու և միտքը ավելի սեղմ ու ճշգրիտ դարձնելու անհրաժեշտությամբ (*առանց խելքի*-ի փոխարեն՝ *անխելք*):

Բավականին հաճախ են հանդիպում **դիմավոր բայ-դերբայ փոխարինումները**, որոնք պատճառ են դառնում նաև այլ փոխարինումների. բարդ ստորադասական նախադասությունը կարող է փոխարինվել պարզով կամ հակառակը¹⁰.

Я научу вас принять позу, исполненную внутреннего достоинства и в то же время привлекательную для взоров самых придиричивых мужчин. (հ. 1, էջ 35) – *Ես ձեզ կսովորեցնեմ, թե ինչպիսի դիրք ընդունեք, որը ստորոված լինի ներքին արժանապատվությամբ և միննույն ժամանակ գրավիչ լինի ամենարժանդիր տղամարդկանց համար:* (հ. 1, էջ 33)

Նշենք, որ ռուսերենում խնդրառությունը կարող է կախված լինել ինչպես բայից, այնպես էլ գոյականից, ածականից: Սա բնորոշ է նաև

¹⁰ Տե՛ս Ա. Քամայան, Թարգմանության տեսության հիմունքներ. Եր., 2020, էջ 126:

հայերենին, սակայն գոյականի, ածականի կառավարումը ավելի շատ է հանդիպում ռուսերենում, քան հայերենում: Այդ պատճառով այդպիսի կառույցները հաճախ թարգմանվում են այլ կազմություններով, որոնց միջև գործում են կապակցության այլ եղանակներ: Վերը բերված նախադասության մեջ ռուսերենի անորոշ դերբայը (*принять*), ածականական դերբայը (*исполненный*) և բայանուն ածականը (*привлекательный*) փոխարինվել են դիմավոր բայով, ինչի հետևանքով պարզ նախադասությունը վերածվել է բազմաբաղադրիչ բարդ նախադասության: Հայերենում միևնույն նախադասության մեջ մեկից ավելի դերբայական դարձվածների առկայության դեպքում խոսքը դառնում է երկարաշունչ, ինչի պատճառով դրանք թարգմանություններում հաճախ փոխարինվում են բարդ ստորադասական նախադասություններով: Մինչդեռ ռուսերենում դերբայական դարձվածներով (*причастный и деепричастный оборот*) նախադասությունները շատ գործածական են:

*Петр начал поощрять мужчин к **сближению** с нею. (h. 1, էջ 58)- Պյոտրը սկսեց խրախուսել տղամարդկանց, որ **մերձենան** նրան: (h. 1, էջ 64)*

*– Не пора ли вам **укладывать** багаж? – сказал он принцессе. – Кажется, вам предстоит **возвращение** в Цербст... (h. 1, էջ 49) - Ժամանակը չէ՞, որ դուք ձեր ուղեբեռները **կապեք**, - ասաց նա արքայադստերը: - Կարծես դուք **պետք է վերադառնաք** Յերբստ: (h. 1, էջ 53)*

Անորոշ դերբայի փոխարինումից բացի՝ այստեղ հանդիպում ենք նաև բայանուն գոյականի փոխարինմանը դիմավոր բայով (*сближение-մերձենան, возвращение-պետք է վերադառնաք*): Այստեղ էլ նույն երևույթն է, ինչ բայանուն ածականների դեպքում: Այս փոխարինման պատճառը թերևս թաքնված է բայանուն գոյականների սահմանման մեջ: Հ. Հարությունյանը, անդրադառնալով գոյականական կառավարմանը, բայանուն գոյականների մասին գրում է. «Բայանուն կոչվում են այն գոյականները, որոնք գործողության առարկայացած անուններ են, այսինքն՝ անվանում են գործողություն, արմատական իմաստով բայեր են (վազք, զրույց, հանդիպում, ակնածանք, դիմադրություն և այլն)»¹¹: Անդրադառնալով դրանց բնույթին՝ Հ. Հարությունյանը նշում է, որ դրանք երկբնույթ բառեր են. իմաստային տեսանկյունից գործողության անուն են, բայց ունեն ձևաբանական հատկանիշներ, շարահյուսական մակարդակում ունեն և՛ գոյականին, և՛ բային բնորոշ կապակցական հատկանիշներ¹²: Այդ է պատճառը, որ ռուսերենի բայանուն գոյականները հայերենում հեշտությամբ փոխարինվում են բայով: Նկատենք, որ բացի պարզից բարդ նախադասության փոխարինումից՝ դերբայի, գոյականի կամ որևէ խոսքի մասի փոխարինումը դիմավոր բայով հանգեցնում է նաև մի շարք այլ փոխարինումների բառային հավելումների, բացթողումների, քերականական կարգերի (հիմնականում՝ հոլովի)

¹¹ Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում. Եր., 1983, էջ 234:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 234-235:

փոփոխությունների:

Բավական հաճախ են հանդիպում **տարբեր խոսքի մասերի՝ ածականի, մակբայի, գոյականի փոխարինումները դերբայի**, ընդ որում՝ ոուսերենի ածականական դերբայը (причастие) կարող է չփոխարինվել հենց հարակատար դերբայով: Այսպես՝

*Я прошу вас позволить **поездку** в Гамбург. (հ. 1, էջ 27) – Խնդրում եմ թույլ տաք **մեկնելու** Համբուրգ... (հ. 1, էջ 23)*

*Она будет вести борьбу до полной **капитуляции** матери. (հ. 1, էջ 34) – Կայաքարի մինչև մոր լիակատար **անձնատուր լինելը**: (հ. 1, էջ 32)*

*Екатерина протянула императору руку для **поцелуя**. (հ. 2, էջ 185) – Եկատերինան ձեռքը մեկնեց կայսրին՝ **համբուրելու**: (հ. 2, էջ 245)*

*Наследник русского престола не знал матери, умершей после его **рождения**. (հ. 1, էջ 36) – Ռուսական գահի ժառանգորդը մայր չէր տեսել (մեռել էր որդու **ծնվելուց** հետո): (հ. 1, էջ 35)*

***С криком** она бросилась на шею отцу. (հ. 1, էջ 40) – Նա **ճչալով** հոր վզովն ընկավ: (հ. 1, էջ 41)*

*– И надежд на **выздоровление** мало? (հ. 1, էջ 49) – Եվ **առողջանալու** հույս քիչ կա: (հ. 1, էջ 52)*

*Императрица прислала мне банку румян **с приказом** нарумяниться. (հ. 1, էջ 49) – Կայսրուհին մի բանկա կարմրաներկ ուղարկեց ինձ՝ **հրամայելով** կարմրացնել այտերս: (հ. 1, էջ 52)*

*– **Ожидание** праздника лучше самого праздника. (հ. 1, էջ 57) – Տոնին **սպասելը** տոնից ավելի լավ է: (հ. 1, էջ 63)*

Այսպիսի օրինակները վեպում բազմաթիվ են, և ինչպես տեսնում ենք, դրանցում գոյականը փոխարինվել է անորոշ դերբայի տարբեր հոլովածներով (**поездка** - **մեկնելու**, **капитуляция** - **անձնատուր լինելը**, **поцелуй** - **համբուրելու**, **рождения** - **ծնվելուց**, **крик** - **ճչալով**, **выздоровление** - **առողջանալու**, **приказ** - **հրամայելով**, **ожидание** - **սպասելը**): Այս փոխարինման պատճառը թերևս կարելի է համարել այն, որ եթե ոուսերենում անորոշ դերբայը լիարժեք բայ է, հայերենում այն ունի նաև գոյականին բնորոշ հատկանիշներ. կարող է հոլովվել, հոդ ստանալ: Հետևաբար այն բայանուն գոյականները, որոնցից հայերենում կարող է բայ կազմվել, հեշտությամբ կարող են թարգմանվել անորոշ դերբայի հոլովածներով:

Նշենք, որ ոուսերենի գոյականը անորոշից բացի կարող է փոխարինվել նաև այլ անկախ դերբայներով: Իհարկե, անորոշով փոխարինումը առավել հաճախ է հանդիպում, սակայն թարգմանության տեքստում գոյականին երբեմն համապատասխանում է համակատար դերբայը:

*Мне страшно **при мысли**, что все это делается для меня. (հ. 1, էջ 43) – Ես սարսափում եմ **մտածելիս**, որ այս բոլորն արվում է ինձ համար: (հ. 1, էջ 44)*

***В разговоре** он свободнейше цитировал Златоуста и Цицерона,*

Вольтера и «Задонщину». (հ. 1, էջ 94) – **Խոսելիս** շատ ազատ կերպով մեջբերումներ էր անում Ոսկերեանից ու Ցիցերոնից, Վոլտերից ու «Զարոնշչինայից»։ (հ. 1, էջ 111)

Դերբայով կարող են թարգմանվել ռուսերենի ոչ միայն գոյականները, այլև ածականները, երբեմն՝ նաև մակբայները։

В канун часа предсмертного имел он беседу с племянником. (հ. 1, էջ 92) – **Մեռնելուց** ամառ զրույց ունեցավ զարմիկի հետ։ (հ. 1, էջ 109)

– *Ты питейное с наукой не путай.* (հ. 1, էջ 88) – Դու **խմելունը** գիտության հետ մի՛ շփոթիր։ (հ. 1, էջ 104)

– *Не страшитесь быть дерзкими.* – сказал он им. (հ. 2, էջ 421) – Չվախենա՛ք **խիզախելուց**, – ասաց նրանց։ (հ. 2, էջ 554)

Վերը բերված օրինակներում ածականները փոխարինվել են անորոշ դերբայի տարբեր հոլովածներով։ Հարկ է նշել, որ այս խոսքի մասերի՝ անորոշ դերբայով փոխարինումը ավելի քիչ է հանդիպում, քան հարակատար և ենթակայական դերբայներով։ Պատճառը խոսքիմասային իմաստներն ու շարահյուսական կիրառություններն են։ Հայերենում հարակատար և ենթակայական դերբայները ունենում են ածականական, գոյականական, մակբայական կիրառություններ։ Ուշագրավ է Հովհ. Բարսեղյանի հետևյալ կարծիքը. «Անկախ դերբայների գործառական դասակարգումը, բացահայտելով այլ խոսքի մասերի և սրանց գործառությամբ հանդես եկող դերբայների ընդհանրությունները, վերահաստատում է գոյական դերբայ (անորոշ), ածական դերբայ (հարակատար, ենթակայական, «ապակատար», ըստ ոմանց՝ նաև ապառնի), մակբայական դերբայ («համընթացական») տերմինների և սրանց հասկացությունների գիտականությունը»¹³։ Այդ է պատճառը, որ ստորև բերված օրինակներում ռուսերենի ածականը թարգմանվել է ենթակայական և հարակատար դերբայներով.

Поверх исподнего фрепона накинута распашной modest. (հ. 1, էջ 32) – *Տակի ֆրեպոնի վրայից հազավ ջկռճկվող մոդեստ*։ (հ. 1, էջ 30)

Эти перемены касались лично ее – маленькой и отверженной в семье принцессы Фике. (հ. 1, էջ 33) – *Այդ փոփոխությունները վերաբերում էին անձամբ նրան՝ փոքրիկ և ընտանիքում մերժված արքայադուստր Ֆիկեին*։ (հ. 1, էջ 31)

Անդրադառնանք նաև **մակբայի փոխարինմանը ածականով և գոյականով**։ Ածականի փոխարինումը մակբայով նույնպես հանդիպում է, բայց ի տարբերություն մակբայ-ածական փոխարինման՝ ավելի հազվադեպ, ինչպես

Потёмкин обладает необыкновенной проницательностью, светлым умом и очень быстрым соображением. (հ. 2, էջ 151) – *Պոտյոմկինը արտակարգ խորթափանցություն ունի, պայծառ միտք և շատ արագ գործող երևակայություն*։ (հ. 2, էջ 199)

¹³ **Հ. Բարսեղյան**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը. Եր., 1980, էջ 489։

Մակբայ-աճական փոխարինման օրինակներ.

– *Уйди вон... не мешай*, – **мрачно** изрек Потемкин. (հ. 1, էջ 21) – *Հենացի ը... մի՛ խանգարիր*, – **մոայլադեմ** արտաբերեց Պոտյոմկինը: (հ. 1, էջ 15)

*Но на все посулы в золотых гинях за предоставление русских войск Панин отвечал **весомо***. (հ. 2, էջ 149) – Բայց ռուսական զորք տրամադրելու դիմաց ոսկեդրամ վճարելու բոլոր խոստումներին Պանինը **ծանրակշիռ** պատասխանում էր: (հ. 2, էջ 197)

Մակբայի փոխարինումը աճականով պայմանավորված է նրանով, որ հայերենում աճականների մի սովոր մաս կարող է դառնալ ն՛ գոյականի, և՛ բայի լրացում: Ինչ վերաբերում է գոյականով փոխարինվելուն, ապա կախված մակբայի տեսակից՝ հայերենում թարգմանվում է գոյականի համապատասխան հոլովաձևով: Այսպես, ձևի մակբայները փոխարինվում են գործիական հոլովով արտահայտված գոյականներով: Պատճառն այն է, որ հայերենում գոյականների գործիական հոլովը, ի թիվս այլ իմաստների, արտահայտում է նաև ձևի իմաստ՝ հանդես գալով ձևի պարագայի պաշտոնով¹⁴:

*Потом **заботливо** поправила подушки под головою девочки*. (հ. 1, էջ 47) – *Հետո **հոգատարություն** շտկեց աղջկա գլխատակի բարձերը*: (հ. 1, էջ 49)

*Императрица **широко** шагнула к Фике, долго изучала лицо девочки*. (հ. 1, էջ 50) – *Չայսրուհին **լայն քայլերով** գնաց դեպի Ֆիկեն, երկար, շատ երկար գննեց աղջկա դեմքը*: (հ. 1, էջ 53)

*А пока его искали, мальчик **терпеливо** качался на верхушке старой березы*. (հ. 1, էջ 75) – *Բսկ մինչ նրան փնտրում էին, տղան **համբերատարություն** ճոճվում էր հին կեչու կատարին*: (հ. 1, էջ 87)

Մյուս հոլովներով թարգմանվելու դեպքում հայերենում փոխվում են շարահյուսական պաշտոնները, օրինակ

– *Фике, не забывайте, что я ваша мать, и **жестoko** с вашей стороны видеть свою мать одетой беднее...* (հ. 1, էջ 43) – *Ֆիկե, մի՛ մոռացեք, որ ես ձեր մայրն եմ և ձեր կողմից **դաժանություն** է սեփական մորը տեսնել ավելի վատ հազնված*: (հ. 1, էջ 44)

Այստեղ մակբայի փոխարինումը գոյականով պայմանավորված է նաև նրանով, որ հայերենին այդքան էլ հատուկ չէ առանց ստորոգյալի ստորոգումը, և փոխարինված գոյականը դարձել է բաղադրյալ ստորոգյալ, ինչը մակբայով արտահայտել տվյալ օրինակում հնարավոր չէր:

Ունենք նաև հակառակ երևույթը, երբ գոյականն է փոխարինվում մակբայով, որը, սակայն, հազվադեպ է հանդիպում:

*Они наезжали в Чижово как разбойники, **без стыда** радовались*. (հ. 1, էջ 83) – *Նրանք ավազակների պես թափվում էին Չիժովո, **անսամոթա***

¹⁴ Տե՛ս Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 260:

բար ուրախանում: (հ. 1, էջ 96)

И она с озорством подмигнула. (հ. 2, էջ 186) – Եվ կայարուհին չարածճիորեն աչքով արեց: (հ. 2, էջ 245)

Դերանունների փոխարինումը գոյականով կամ հակառակը նույնպես հաճախ հանդիպող երևույթ է: *Он, она, оно* դերանունները երբեմն հնարավոր չէ հայերեն թարգմանել *նա* դերանունով, քանի որ հայերենը չունի սեռի քերականական կարգ ո՛չ գոյականի, ո՛չ դերանվան համար, իսկ համատեքստը պահանջում է սեռային տարբերակում մտցնել: Սեռանիշ դերանունները կարող են թարգմանվել այլ բառային միջոցներով, օրինակ՝ հատուկ անուններով կամ համապատասխան գոյականներով (աղջիկ/տղա, կին/տղամարդ, օրիորդ/տիկին/պարոն, - ուհի ածանցի միջոցով)¹⁵:

Камергер застал Фике уже полностью одетой; казалось, в эту ночь она не спала. (հ. 1, էջ 43) – Կամերգերը Ֆիկեին գտավ արդեն լրիվ հագնված. աղջիկը, կարծես, այդ գիշեր չէր քնել: (հ. 1, էջ 44)

– Чего тебе надобно? – спросила она, подходя. (հ. 1, էջ 68) – Ի՞նչ ես ուրուս, - մոտենալով հարցրեց կինը: (հ. 1, էջ 78)

Գոյականի՝ դերանվամբ փոխարինումը վեպում հանդիպում է այն դեպքում, երբ տվյալ հատվածում հստակ երևում է, թե ում մասին է խոսքը, և *նա*-ի կիրառությունը իմաստային շփոթ չի առաջացնում.

С видом необыкновенно серьезным девочка указала вельможе на стол. (հ. 1, էջ 43) – Նա արտակարգ լուրջ տեսքով մեծատոհմիկ աստիճանավորին մատնացույց արեց սեղանը: (հ. 1, էջ 44)

Ամփոփելով նշենք, որ ինչպես վերը բերված օրինակներից է երևում, վեպի թարգմանությունը բավականին հարուստ է խոսքիմասային փոխարինումներով: Բնականաբար, բազմաթիվ օրինակներ հոդվածում ներկայացված չեն, քանի որ վերջինս ծավալը թույլ չի տալիս ամբողջը ներառելու: Սակայն բերելով գրեթե բոլոր տիպի խոսքիմասային փոխարինման օրինակներ և հնարավորինս մեկնաբանելով այդ փոխարինումների պատճառները՝ կարող ենք եզրակացնել, որ վեպի ռուսերենից հայերեն թարգմանության մեջ առավել մեծ թիվ են կազմում ածական-գոյական, գոյական-դերբայ, դերբայ-դիմավոր բայ խոսքիմասային փոխարինումները, գոյական-մակբայ, ածական-մակբայ փոխարինումները ավելի քիչ են հանդիպում, իսկ մյուսները միջին տեղ են զբաղեցնում: Ինչպես տեսնում ենք, այսպիսի փոխարինումները թելադրված են թարգմանության լեզվի՝ հայերենի օրինաչափություններով:

ЛИЛИТ ЦАТУРЯН – Замены частей речи в армянском переводе романа В. Пикюля “Фаворит”. – В любом переводе неизбежны различные трансформации. Они могут быть обусловлены лингвистическими или экстралингвистическими аспектами. Лингвисты условно делят эти трансформации на группы,

¹⁵ Տե՛ս Ա. Քամայան, նշվ. աշխ., էջ 126:

учитывая разные принципы классификации. Они в широком смысле представлены на лексических и грамматических уровнях. Замена частей речи занимает большое место в грамматических трансформациях. В процессе перевода замена одной части речи языка оригинала на другую в основном обусловлена грамматическими и стилистическими особенностями и закономерностями языка перевода.

Ключевые слова: *часть речи, трансформация, эквивалентность, добавления, опущения, морфология, язык перевода, стилистический признак, грамматическая трансформация, член предложения*

LILIT TSATURYAN – *Substitutions of Parts of Speech in Armenian Translation of V. Pikul's Novel "The Favorite"*. – Various transformations are inevitable in any translation. They may be due to linguistic or extra-linguistic aspects. Linguists conditionally divide these transformations into groups taking into account different principles of classification. They are broadly represented at the lexical and grammatical levels. The substitution of parts of speech occupies a large place in grammatical transformations. In the process of translation the substitution of one part of speech of the original language with another is mainly conditioned by grammatical and stylistic features and patterns of the target language.

Key words: *part of speech, substitution, equivalence, word addition, omission, morphology, target language, stylistic feature, grammatical transformation, part of a sentence*